ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

17.02.2023Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
2. Կրթական ծրագրերում փոփոխություններ կատարելու մասին վերանայող աշխատանքային խմբերի առաջարկների քննարկում:
3. 2022-2023 ուստարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների թեկնածուների առաջադրում:
4. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:
5. Հաղորդում ամբիոններում 2-րդ կիսամյակի դասընթացների Moodle համակարգում նյութերի տեղադրման, փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա I քննաշրջանի արդյունքները: Նշվեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Զեկուցողը փաստեց, որ առաջին քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը անցկացվել է պատշաճ կերպով, բողոքարկումներ և դժգոհություններ

չեն եղել: 2022-2023 ուստարվա I քննաշրջանի արդյունքները կից ներկայացված է ***Հավելված 1***-ում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-23 ուստարվա I կիսամյակի ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Զեկուցողը ներկայացրեց կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները: Նանշեց, որ ընդհանուր առմամբ կրթական ծրագիրը պատրաստ է 70%-ով: Խնդիր կա որոշ կրթական ծրագրերի նկարագրիչների վերջնական տեսքի բերելու հետ կապված: Զեկուցողը հայտնեց, որ խումբը աշխատում է և սահմանված ժամանակում կներկայացվի խմբագրված տարբերակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տ. Բազամյանը, Վ. Աղաբաբյան: Դեկանի պաշտոնակատարը ևս մեկ անգամ դասավանդող դասախոսներին հորդորեց վերջնական տեսքի բերել նոր՝ 2023-27 կրթական ծրագիրը, հետևել ուսումնական պլանին և փորձել ավելի արդիական և մրցունակ ծրագիր ներկայացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի կողմից 2022-2023 ուստարվա II կիսամյակում անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների ցուցակը: Զեկուցողը նշեց այն չափանիշները, որոնք հաղթահարելուց հետո ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի, որոնք են՝ անառարկելի ակադեմիական բարձր առաջադիմությունը, պատշաճ կարգապահությունը և հասարակական ակտիվությունը: Զեկուցողը առանձնացրեց «Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Մանե Սարհատյանին և Արուսյակ Ղարախանյանին: Վերջիններս հինգ կիսամյակ անընդմեջ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն: Վ. Աղաբաբյանը առաջարկեց Մ. Սարհատյանին ներկայացնել որպես «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու, իսկ Ա. Ղարախանյանին «Իջևան» քաղաքի անվանական կրթաթոշակի թեկնածու: Զեկուցողը առանձնացրեց «Կիրառական արվեստ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողներ Սարինե Ամիրյանին, Մարիամ Ռևազյանին և Քրիստինե Գևորգյանին: Վերջիններից Ս. Ամիրյանը ցուցաբերել է չորս, իսկ Մ. Ռևազյանը և Ք. Գրիգորյանը՝ հինգ կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն: Վ. Աղաբաբյանը առաջարկեց Ս. Ամիրյանին ներկայացնել որպես «Արցախի 44 օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների» անվանական կրթաթոշակի թեկնածու, Մ. Ռևազյանին «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի թեկնածու, իսկ Ք. Գևորգյանին «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու: Զեկուցողը ներկայացրեց նաև «Կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Ալ. Ոսկանյանին և առաջարկեց ներկայացնել « Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել մասնաճյուղի տնօրինությանը՝ հաստատելու Մ. Սարհատյանին «Արտակ Ցուցուլյան» անվանական կրթաթոշակի թեկնածու, Ա. Ղարախանյանին՝ «Իջևան» քաղաքի անվանական կրթաթոշակի, Ս. Ամիրյանին՝ «Արցախի 44 օրյա պատերազմում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անմահացած ուսանողների և շրջանավարտների» անվանական կրթաթոշակի,

Մ. Ռնազյանին՝ «ԵՊՀ» անվանական կրթաթոշակի, Ք. Գևորգյանին՝ «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակի և Ալ. Ոսկանյանին՝ «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակի թեկնածուներ:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում: Նշվեց, որ լուծարքային շրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: 2022-2023 ուստարվա I քննաշրջանի արդյունքները կից ներկայացված է ***Հավելված 2***-ում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա II կիսամյակի դասընթացների Moodle համակարգում նյութերի տեղադրման, փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին: Զեկուցողը նշեց որ գրեթե բոլոր առարկայական փաթեթների պլանները ըստ ժամանակացույցի տեղադրված են Moodle համակարգում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Moodle համակարգում նյութերի տեղադրման, փաթեթների առկայության և վերանայման ընթացքը համարել բավարար։

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված 1

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

<u>ցերեկային,</u> երեկոյան, հեռակա ուսուցում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2022-2023 ուս. տարվա I կիսամյակ

Ընդհանուր ուսուցում Ձև 34

Խումբ	Մասնագիտություն	Ուս. թիվը քնն. վերջ.	Այդ թվ. ակ.ա րձ.	Պար տավ. հանձ ն քնն	Ընդ. թույլ. քնն.	Չեն ներկայաց.: հարգ. պատ ճառ	Չեն ներկայաց.: անհ. պատ ճառ.	Հանձնել են: Բոլոր առարկ ան.	Հանձնել են: Միայն գեր գնահ.	Հանձնել են: Միայն գեր.և լավ	Հանձնել են: Խառը գնահ.	Հանձնել են: Միայն բավար ար	Մնացել են անբավարար գնահատ.: Ընդ.	Մնացել են անբավարար գնահատ.: Մեկ առ.	Մնացել են անբավարար գնահատ.: Երկու առ.	Մնացել են անբավարար գնահատ.: Երեք և ավելի	Բացարձակ առաջ %	Ակ. ուս. կես կուրս-ը	Մնաց. երկ. տա-րին	Հեռ. քնն. արդ. հիմ. վրա	Փոխադրվ. հաջ. կուրս: Ընդ.	Փոխադրվ. հաջ. կուրս: Այդ թվում
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
Դ I	Դիզայն (գեղար)	6						5	1	1	3	0	1	0	1	0	*83.33*					
Դ II	Դիզայն (գեղար)	6						5	0	3	2	0	1	0	1	0	*83.33*					
Դ III	Դիզայն (գեղար)	12						10	0	4	6	0	2	1	1	0	*83.33*					
Դ IV	Դիզայն (գեղար)	9						6	2	1	3	0	3	1	2	0	*66.67*					
Ընդ. Դիզայն (գեղար)		*33*						*26*	*3*	*9*	*14*	*0*	*7*	*2*	*5*	*0*	*78.79*					
ԿԱ IV	Կիրառական արվեստ	8						5	1	1	3	0	3	2	1	0	*62.50*					
ԿԱ I	Կիրառական արվեստ	11						10	3	0	6	1	1	1	0	0	*90.91*					
ԿԱ II	Կիրառական արվեստ	8						6	0	4	2	0	2	1	0	1	*75.00*					
ԿԱ III	Կիրառական արվեստ	9						6	0	5	1	0	3	1	2	0	*66.67*					
Ընդ. Կիրառական արվ		*36*						*27*	*4*	*10*	*12*	*1*	*9*	*5*	*3*	*1*	*75.00*					
Ընդամենը ֆակուլտետում		*69*						*53*	*7*	*19*	*26*	*1*	*16*	*7*	*8*	*1*	*76.81*					

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան

15/02/2023

Հավելված 2

Կիրառական արվեստի ֆակուլտետի 2022-2023 ուս.տարվա
Ի կիսամյակի I լուծարքային շրջանի
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Խումբը	Մասնագիտությունը	Ուսանող.քանակը		1 պարտք		2 պարտք		3 պարտք		Ընդհ.պարտք		Առաջադիմ. %	
		ընդ.	անվ.	ընդ.	անվ.	ընդ.	անվ.	ընդ.	անվ.	ընդ.	անվ.	ընդ.	անվ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Դ I	Դիզայն (գեղար)	5	2	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
Դ II	Դիզայն (գեղար)	6	2	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
Դ III	Դիզայն (գեղար)	12	3	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
ԴIV	Դիզայն (գեղար)	9	2	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
Ընդ.	**Դիզայն (գեղար)**	**32**	**9**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**100.00**	**100.00**
ԿԱ IV	Կիրառական արվեստ	8	3	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
ԿԱI	Կիրառական արվեստ	10	3	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
ԿԱII	Կիրառական արվեստ	8	3	0	0	0	0	0	0	0	0	*100.00*	*100.00*
ԿԱIII	Կիրառական արվեստ	9	3	1	0	0	0	0	0	1	0	*88.89*	*100.00*
Ընդ.	**Կիրառական արվեստ**	**35**	**12**	**1**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**1**	**0**	**97.14**	**100.00**
Ընդ.	*ֆակուլտետում*	*67*	*21*	*1*	*0*	*0*	*0*	*0*	*0*	*1*	*0*	*98.51*	*100.00*

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան

15/02/2023